Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1990—1991 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Սույն թվականի մայիսի 31-ին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում, նախագահությամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1990—1991 ուսումնական տարվա փակման արարողությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր տաճարի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսամյանը, Անգլիայի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Եղիշե եպս. Կիզիրյանը, Կիլիկյան Աթոռից՝ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Արտակ արքեպս. Մանուկյանը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և բազմաթիվ հյուրեր:

Տերունական աղոթքից հետո, բացման խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի ուսմասվար տիար Գևորգ Բաղդիշյանը.

«Այս հանդիսության նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1990—1991 ուսումնական տարվա փակումը, որը նաև յուրահատուկ հաշվետվություն է:

Ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին վստահված է չափազանց կարևոր, դժվար, բայց խիստ պատվաբեր ու շնորհակալ գործ՝ ազնիվ, բարի, մտավոր կարողությամբ օժտված սերմնացաններ պատրաստել հայոց հոգևոր-կրոնական անդաստանի համար:

Այս կրթօջախը աչքի լույսի պես փայփայվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից: Ոչինչ և հնարավոր ոչ մի բան չի խնայվում ճեմարանի մտավոր ու բարոյական վարկի բարձրացման համար:



Հոգևոր ճեմարանի առջև

Մեծ պատիվ է ճեմարանի դասախոս կամ ճեմարանի սան դառնալը: Այս պայծառ գիտակցմամբ մենք ճամփա ենք ելել՝ մեր վարքի ու գործունեության անկյունաքարը դարձնելով մեր խիղճն ու խղճմտանքը, երկյուղածությունն ու պատասխանատվության զգացումը Աստծո, մեր ժողովրդի, Վեհափառ Հայրապետի և ձեր առջև:

Վեհափառ Տեր և հարգելի ներկաներ, բացելով այս հանդիսությունը, հավատիացնում ենք ձեզ և իբրև երդում ասում, որ մենք աշխատելու ենք խղճի մտոք ու նվիրվածությամբ՝ հանուն մեր ժողովրդի ու նրա հավատքի, հանուն մեր հույսի ու սիրո, հանուն մեր հանապազորյա հացի:

Ճանապարհն արդարոց օրհնությամբ եղիցի»:

Ապա ճեմարանի սաների կատարմամբ հնչեցին Մ. Եկմալյանի «Ով Հայոց աշխարհ»-ը, Ն. Լամբրոնացու «Այսօր հրեշտակք ի բարձունս» գեղեցիկ շարականը, Կոմիտաս Վարդապետի «Էսօր ուրբաթ է, պաս է» երգը, արտասանվեց Դ. Վարուժանի «Զոն» բանաստեղծությունը:

Ուսանողության անունից հանդես եկավ Դ լսարանի սան Արթուր Պողոսյանը և ի մասնավորի ասաց.

«Այսօր, այս նվիրական հարկի տակ, հավաքվել ենք ուրախ հանդիսությամբ կատարելու փակումը հոգևոր ճեմարանի 1990—1991 ուսումնական տարեշրջանի: Հուզումնալից է պահը ուսանողներիս համար, որովհետև պատմության գիրկն է անցնում մեր երիտասարդության ամենաքաղցր տարիներից մեկը: Սակայն հուզումի հետ միաժամանակ ուրախ ենք, քանի որ դեռևս պատանիներ էինք, երբ ոտք դրեցինք ճեմարանի այս ս. հարկից ներս և Մայր Աթոռ Ս. Էջմիածին վանական մթնոլորտի մեջ անցկացնելով մեր ուսումնառության բեղուն տարիները, ճանաչեցինք և սիրեցինք մեր Առաքելահաստատ Հայ Եկեղեցին, մեր հոգևոր մշակույթն ու գրականությունը:

Վեհափառ Տեր, մենք՝ որպես «Անձինք նուիրեալք», պատրաստ ենք մեր երիտասարդ կյանքը ընծայել Մայր Աթոռի և Հայ Եկեղեցու ծառայության սրբազան գործին, դառնալ Քրիստոսի քաղցր լծի հոժարակամ կրողները և Հայոց աշխարհում սերմանել Ավետարանի ճշմարիտ պատգամները: Վստահեցնում ենք Ձերդ Սրբությանը և մեր տեսչությանը, որ մեր վրա ձեր ունեցած հույսերը կարդարացնենք՝ Աստուծո հովանավորությամբ ու ձեր առաջնորդությամբ»:

Հուսկ հետո երգչախմբի կատարմամբ հնչեց Ալ. Հարությունյանի «Հայրենիքիս հետ» երգը, արտասանվեց Ավ. Իսահակյանի «Հայրենիքիս» բանաստեղծությունը:

Տարեկան հաշվետու խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի վերատեսուչ, Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը.

«Վեհափառ Տեր,

Աստուծո օգնականությամբ և Ձերդ Վեհափառության օրհնությամբ իննամսյա աշխատանքից հետո, Մայր Աթոռիս Հոգևոր Ճեմարանի դռները փակում ենք ամառային եռամսյա արձակուրդով: Այսպիսով 1990—91 ուսումնական տարին ևս հանձնվում է ճեմարանի պատմության: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս մեր ուժերի ներած չափով փորձեցինք օգտակար լինել այս սրբազան հաստատության:

Հայաստանյայց Եկեղեցու հանդեպ ծառայության և նվիրման ոգին մեզ բոլորս բոլորել է այս հոգևոր հարկի տակ: Մենք ոչ միայն կոչման ջահը

հաջորդ սերունդներին փոխանցելու գիտակցությունն ունենք, այլ նաև գիտակցությունը մեր կյանքի գնով այդ ջահի լույսը վառ պահելու և տարածելու մեր ժողովրդի ծոցում: Այդ ջահի լույսը մենք ժառանգել ենք առաքելաշավիղ մեր հավատի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչից:

Հոգևոր Ճեմարանի 1990—91 ուսումնական տարին սկսել ենք անցյալ սեպտեմբերի 15-ին, 137 աշակերտներով: Այս տարվա ընթացքում ինչ-ինչ պատճառներով Ճեմարանից հեռացել են 27 սաներ: Այս ուսումնական տարին մենք փակում ենք 110 սաներով՝ 7 դասարանների վրա բաշխված, նախապատրաստական քահանայական դասարանները ներառյալ:

Անցնող ուսումնական տարվա ընթացքում, Հոգևոր Ճեմարանի կրթական ծրագիրը կենսագործվել է գրեթե ամբողջությամբ: Պետք է գնահատանքով նշեմ, որ մեր դասախոսները, հակառակ երբեմն ստեղծված արտաքին դժվար պայմանների, ջանք չխնայեցին իրենց առավելագույնը տալու և մեր կրթական ծրագիրը լիուլի իրագործելու: Ուսումնական այս տարվա ավարտին պարտք ունեմ շնորհակալություն հայտնելու մեր դասախոսներին իրենց ցուցաբերած խղճամիտ և արդյունավետ աշխատանքի համար:

Ճեմարանի սաները, անխտիր ամեն առավոտ և երեկո, մասնակցություն են բերել Մայր Տաճարի արարողությանց, մասնակցել կիրակնօրյա և տոնական օրերի պատարագներին, ինչպես նաև Էջմիածին քաղաքի եկեղեցիներում ժամերգությանց:

Այս տարի Հոգևոր Ճեմարանը շրջանավարտներ չի ունենալու: Վեց սաներ տեղափոխվում են հինգերորդ լսարան: Դասախոսական վերջին ժողովը նպատակահարմար գտավ, որ նախկինի նման Հոգևոր Ճեմարանի դասընթացները բաժանվեն 6 լսարանների վրա:

Այս կրթական տարում Ճեմարանի հարկի տակ կազմակերպված գրական-գեղարվեստական, ուսումնամանկավարժական երեկոների թիվը զգալի չափով շատացել էր:

Ամեն ամիս դասախոսության են հրավիրվել մասնագետ մարդիկ, կազմակերպվել են համերգներ, գրական գեղարվեստական և ասմունքի երեկոներ, կրոնական, ընկերային, գիտական ու քաղաքական հարցերի մասին դասախոսություններ:

Այս տարի Ճեմարանի հարկի տակ ելույթներ են ունեցել, Տ. Ներսես քահանա Ներսեսյանը, Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, վերապատվելի Մանվել Ջինբաշյանը, վերապատվելի Սամվել Սահակյանը, Շնորհք վարդապետ Բաղդասարյանը, Պրն. Հակոբ Հակոբյանը, բանաստեղծ Վահագն Դավթյանը, շնորհալի ասմունքողներ Սիլվա Յուզբաշյանը, Կամո Տեր-Պետրոսյանը և Մարի Պահատրյանը: Դասախոսական ընդհանուր ժողովներ են կանոնավորապես տեղի ունեցել ամիսը մեկ անգամ Ճեմարանի հարկի տակ, Հոգևոր Ճեմարանի առօրյա կյանքը և ուսումնական ծրագրերը ընթացիկ տարում լավագույնս իրականացնելու համար:

Գոհություն Աստուծո, այս տարի ուսանողների առողջական վիճակը գոհացուցիչ է եղել, հակառակ ջեռուցման պակասին և հանրակացարանային ոչ հարմար պայմաններին, ինչպես նաև ուսանողության քանակի աճին լուրջ հիվանդություններ գրեթե չեն ունեցել մեր սաները:

Այս ուսումնական տարվա ընթացքում Ճեմարանի սաները հնգօրյա ձյունագնացության են մեկնել դեպի Ծաղկաձոր:

Առաջիկա երկուշաբթի Հոգևոր Ճեմարանի սաները կմեկնեն տարեվերջի հնգօրյա շրջագայության դեպի հայրենի տեսարժան վայրերը:

Ներկայիս Հոգևոր Ճեմարանի սաների տրամադրության տակ է դրված արդի կյանքի պայմաններին համապատասխան մարզական գույքով համալրված մի մարզադահլիճ երբեմնի անգործածելի մարզադահլիճի փոխարեն: Մարմնամարզության դասատու Պրն. Ռուբեն Կարապետյանը իր լավագույնն է ի գործ դնում ուսանողների մեջ սպորտի սերը խորացնելու գործում: Հաճախ նրա հսկողությամբ և ղեկավարությամբ Ճեմարանի մարզադաշտում ուսանողները կազմակերպում են ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկետբոլի խաղեր:

Մեր խոսքը փակելուց առաջ, պարտք ունենք երախտագիտական խոսք ասելու Վեհափառ Հայրապետին՝ Իր հայրական հոգատարության համար: Հույս ունենք, որ մեր սաները իրենց ուսումնառությամբ, կարգապահությամբ և կոչման գիտակցությամբ կաշխատեն երախտահատույց լինել Նորին Սրբության հայրական խնամքին:

Իբրև վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի, շնորհակալության խոսք ունեմ Ճեմարանի ուսմասվար Պրն. Գևորգ Բաղդիշյանին, Ճեմարանի քարտուղար՝ Պրն. Արմեն Հովսեփյանին և Հոգևոր Ճեմարանի վերակացուներ Տեր Տիրայր քահանա Քըլըջյանին և Պրն. Վաչագան Հովհաննիսյանին, որոնք անձնվիրաբար կատարեցին իրենց վստահված այս պատասխանատու գործը:

Այսու փորձեցինք հակիրճ տողերով ներկայացնել 1990—1991 ուսումնական տարվա Ճեմարանի ուսումնադաստիարակչական կյանքի պատկերը և նպատակը: Վստահ ենք, թե նվիրական այս գործի իրականացման ճանապարհին, Աստված կհովանավորի և կարդյունավորի մեր աշխատանքը: Թող հավետ ապրի բազմադարյան այս «փոքր ածուն»: Թող Աստված երկար, քաջառողջ տարիների կյանք պարգևի Հայոց Հայրապետ՝ Վազգեն Ա Կաթողիկոսին Ամենայն Հայոց, որպեսզի մեր գալիք օրերը լինեն ավելի արդյունավետ, բարի և ապագայի տեսիլներով լի»:

Ապա կատարվեցին Բախ-Գունոյի «Ավե Մարիա» ստեղծագործությունն ու Մ. Եկմալյանի «Տէր, կեցո դու զհայս» հոգեհույզ երգը:

Ուսանողությանը իր ողջույնի և շնորհավորանքի խոսքն ուղղեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Արտակ արքեպս. Մանուկյանը.

«Վեհափառ Տեր, Հոգևոր եղբայրներ, սիրելի հյուրեր և սաներ: Նախ շնորհակալություն եմ ուզում հայտնել Վեհափառ Հայրապետին, որ առիթն ընծայեց անմիջական տպավորություններ փոխանցելու հոգևոր ճեմարանի տարեվերջի այս հանդիսությունից:

Տարեվերջի հանդիսությունները կրթական կյանքից ներս՝ բացված պատուհաններ են, որտեղից գաղափար ենք կազմում ամբողջ տարվա ընթացքում կատարված մտավոր և հոգևոր աշխատանքներին:

Հոգևոր ճեմարանները և դպրեվանքերը տարբերվում են մյուս կրթական հաստատություններից, որովհետև նրանց առաքելությունը բոլորովին տարբեր է, որովհետև հոգևոր ճեմարանից ներս առաջին առիթով պատրաստվում է հոգիի մարդը՝ հոգևորականը: Եվ դասախոսներ, տեսչություն և մասնավորաբար Վեհափառ Հայրապետը ակնկալում են, որ պատրաստված սերունդը եկեղեցվո նվիրումի մեջ, ժողովուրդի ծառայության մեջ, ամեն բանից առաջ պետք է լինի հոգևորական, որովհետև հոգիների հետ գործ պիտի ունենա ապագային: Ժողովուրդը փնտրտուքի մեջ է՝ ուզում է հասկանալ ինչ է իր եկեղեցին, ինչ է իր հավատքի առարկան, ինչու համար է հավատում, և այս հասկացնելու համար հոգեմտավոր պաշարներով լեցված սերունդ է պետք: Եվ այս ճեմարանի հարկից ներս այդ սերունդն է, որ պի-

ռի պատրաստվի: Մի քիչ մեզ հիշեցնում է Ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակաշրջանը: Հիմա ևս եկեղեցականները թե՛ Հայաստանում և թե՛ արտասահմանում անհրաժեշտորեն մեր ժողովրդին պիտի ներկայացնեն մեր Եկեղեցին իր իսկության մեջ՝ իր վարդապետությամբ, իր առաքելությամբ, իր մշակութային ծառայությամբ, իր ազգային ծառայությամբ և մանավանդ իր հոգևոր ծառայությամբ:

Այսօր ամեն մարդ կարող է իր որևէ կարողությամբ հպարտանալ. մեկն իր գիտությամբ, որովհետև համալսարանները բաց են բոլորի առաջ և այդ գիտությունն իրեն հեղինակություն է տալիս, մյուսն իր մտավոր պատրաստությամբ, որովհետև հայրենիքում և գաղթօջախներում հեղինակությունը մտավորականներին է, մեկ ուրիշը իր տնտեսական կարողությամբ: Բայց որտե՞ղ է եկեղեցականը: Եկեղեցականը ամեն բանից առաջ պետք է ունենա հոգևորականի և եկեղեցականի նկարագիր, որին մենք կոչում ենք ասում: Նկարագիր, որպեսզի երբ խոսում է, քարոզում է, ժողովրդի հետ հարաբերության մեջ է, զգում ես, որ դիմացդ եկեղեցական կա՝ հոգիով պատրաստված, հոգիով լեցված, դարձել է հոգիի մարդ՝ Աստուծո ճանաչողության իսկությունը տալու ժողովրդին:

Մենք պատմական դարաշրջանի մեջն ենք, մոտենում ենք երկու հազարթվականին, և մեծ փոփոխություններ կարող են լինել ապագայում, բայց այս մեծ փոփոխությունների մեջ ամեն բանից առաջ անհրաժեշտ է, որ Եկեղեցին ինքը ներքնապես կազմակերպվի և այստեղ պատրաստված սերունդը, ինչպես նաև արտասահմանի դպրեվանքերու մեջ պատրաստված սերունդը պետք է լծվի ներքին առաքելության կարիքն ունինք, ներքին առաքելություն մեր ժողովրդի հոգին և միտքը լուսավորելու համար:

Ես շնորհավորում եմ Վեհափառ Հայրապետին, որ այսպես հոգածու է հոգևոր ճեմարանի առաջադիմության նկատմամբ:

Շնորհավորում եմ տեսչությանը, որ հոգևոր սերունդ է պատրաստում: Շնորհավորում եմ դասախոսական կազմին և շնորհավորում եմ սիրելի սաներ ձեզ, որ առաջիկային մեկ տարի ևս մեծանալով ավելի պիտի գիտակցեք, թե ինչի համար եկած եք այստեղ և ինչի համար եք պատրաստվում: Հաջողություն եմ ցանկանում ձեզ»:

Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետը առաջադեմ սաներին բաշխեց մրցանակները և տվեց իր օրհնությունը՝ շնորհավորելով տեսչությանը, դասախոսական կազմին՝ 1990—1991 ուսումնական տարին հաջողությամբ ավարտելու համար: Նորին Սրբությունն ասաց.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

«Տուր զհամար տնտեսութեան քո».

Այս խոսքերը ծանոթ են ձեզ: Հիշում եք Ս. Ավետարանից «Անիրավ տնտես»-ի առակի պատումից: Բայց իմ մտածողությամբ այս կոչը, այս հրամայականը չի պարփակվում միայն այդ առակի իմաստավորման մեջ, այլ ընդհանուր համամարդկային իմաստ ունի, որովհետև, գոնե մենք՝ իբրև քրիստոնյաներ, հավատում ենք, որ մարդ արարածը պատահական երևույթ չէ այս աշխարհի վրա, այլ ինչ որ նպատակով ստեղծված է, և մի

բարձր նպատակի ծառայելու համար կապրի մինչև իր կյանքի վերջին պահը, հավատալով, որ իր աշխատանքը, իր կատարած գործը իր կյանքի ընթացքում, պիտի վարձատրվի ուրիշ աշխարհի մեջ՝ կյանքի մյուս ափին: Հետևաբար այսպես ըմբռնելով մեր մարդկային կոչումը, մեծ կարևորություն է ստանում այս հրամայականը. «Տուր զհամար տնտեսութեան քո»: Բայց կարծում եմ, որ այս վերաբերում է հատկապես մեզ՝ հոգևորականներիս, և բոլոր կրթական այն հաստատություններին մանավանդ, որոնք ապագա հոգևորականներ են պատրաստում, ինչպես մեր հոգևոր ճեմարանն է Մայր Աթոռում: Այս հասկացողությամբ ես պետք է հաստատեմ, որ անցնող տարեշրջանը եղավ, իսկապես, կազմակերպված աշխատանքային տարի: Եվ ինչպես նկատեցինք համարատվություններից և շնորհաբաշխումներից, գիտեք նաև, որ բավական տեղեկություններ ունեմ ճեմարանի ուսումնական կյանքի ընթացքի մասին, ուստի պետք է անկեղծորեն հաստատեմ, որ այս տարին եղավ մեր հոգևոր ճեմարանի լավագույն դպրոցական տարիներից մեկը: Չեմ կարող ասել կատարելագույնը եղավ, ունեցանք և ունենք տակավին տկար կողմեր, դա բնական երևույթ է բոլոր նման հաստատությունների մեջ: Ապա ինչքան էլ գոհ լինենք արդյունքներից, երբեք պետք չէ բավարարվենք այդքանով, այլ պետք է ձգտենք ավելին: Եվ մեր պարագային հատկապես, այսօրվա պայմաններում, մեր հայրենիքի այս վերածնման, զարթոնքի, ազգային, քաղաքական, հասարակական իմաստով վերաշինության այս արշավի ճանապարհին, բնականաբար մենք անտարբեր պետք չէ մնանք և պետք է աշխատենք մրցության մեջ մտնել ուրիշ նման հաստատությունների հետ, հետ չմնալ և մեր պարտքը կատարել լիությամբ, և՛ հոգևոր-կրոնական իմաստով, և՛ ազգային-հայրենասիրական իմաստով, և՛ հասարակական-բարոյական իմաստով:

Ասվեց արդեն, որ մենք գտնվում ենք նոր պայմանների մեջ, անշուշտ, և ոչ միայն մեր Եկեղեցին, մենք՝ հոգևորականներս, այլ նաև մեր ժողովուրդը և հատկապես մեր ներկա ինքնիշխան հանրապետության ղեկավարությունը: Սա ասում եմ պատասխանատվության զգացումով: Սպասվում է մեզանից, որ հայ հոգևորականը իր պարտքը կատարի մեր ժողովրդի այսօրվա ծանր պայմանների մեջ, որպեսզի ավելի բարձրացնի հոգևոր և ազգային ոգեկանությունը, որպեսզի մեր հասարակական կյանքում մինչև հիմա տեղի ունեցած և տակավին շարունակվող թերությունները վերանան: Գոնե մեր պարտքը նկատենք՝ մեր նպաստը բերելու այդ թերությունների վերացման աշխատանքին: Ինձ ուրախացնում է և պարտավորեցնում այն փաստը, որ մեր երիտասարդ ղեկավարները՝ և՛ մեր նախագահը՝ Լևոն Տեր-Պետրոսյան, և՛ Նախարարաց խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը և ուրիշներ միշտ շեշտել են իրենց ապասումը, աղերսը, որ Հայ Եկեղեցին իր առաքելությունը շարունակի նաև այս իմաստով:

Չեմ ուզում շատ մանրամասնությունների մեջ մտնել, բայց կարծում եմ, հասկանում եք, թե ինչ եմ ուզում ասել: Եվ այդ գործի համար մենք կարիքն ունենք իրապես նվիրյալ, գաղափարապաշտ, և նույնիսկ զոհաբերության ոգիով պատրաստ հոգևորականների:

Սա, սիրելի ուսանողներ, սովորական արհեստ չէ, որ դուք սովորում եք այստեղ, սովորական գիտական հաստատություն չէ: Ես հարգում եմ բոլոր գիտական հաստատությունները, բոլոր արհեստները, ամեն մեկն իրենց տեղը, կարևորությունն ու դերն ունեն: Բայց դուք՝ երիտասարդներ, որ եկել եք այստեղ հոգևորական լինելու, մի կարծեք, թե ինչ-որ արհեստ եք սովո-

ում, ինչ-որ գիտելիքներ եք ամբարում, ինչպես ուրիշ կրթական հաստատությունների մեջ: Դուք կաք այստեղ, որպեսզի այդ գիտելիքներով, ձեր ուսմամբ, ձեր եկեղեցական արարողություններին մասնագիտանալով, այդ բոլորը յուրացնելով ծառայեք հիմնական նպատակի, իբրև մեր Եկեղեցու սպասավորներ և նվիրյալներ: Այս տեսակետից մենք պահանջկոտ ենք: Ով որ այս դժվար լուծը ի վիճակի չէ տանելու, լավ է, որ մեր մեջ չմնա:

Դժվար է հոգևորական լինելը, բայց կարծում եմ, որ որևէ երիտասարդ հոգեբանորեն ավելի կոգևորվի, եթե մի դժվար գործ վստահվի իրեն: Դա երիտասարդի, ազնիվ երիտասարդի բնական հոգեկան, հոգեբանական վիճակն է: Եվ մենք՝ տարեցներս, որ կանք այստեղ, զգացել ենք ժամանակին հոգեկան հաճույքը և հպարտանքը՝ դժվարությունների առջև գտնվելու, հաղթահարելու, պայքարելու բոլոր տեսակի թերությունների և բացասական երևույթների դեմ և մեր պարտքը կատարելու:

Այս տեսակետից մեր հոգևոր ճեմարանը վճռական դեր ունի կատարելիք: Ինձ համար մխիթարություն է, որ մեր բոլոր հոգևորականները՝ թեմական առաջնորդները, եպիսկոպոսները, վարդապետները, քահանա հայրերը, որոնք պաշտոնավարում են ամենուրեք, բոլորն էլ վերջին 30—35 տարիների ընթացքում մեր հոգևոր ճեմարանի շրջանավարտներն են: Սա կարևոր իրողություն է և ցույց է տալիս նշանակությունը, արժեքը մեր այս կրթական հաստատության:

Բոլորն էլ իրենց կարևոր աշխատանքը ծավալում են այսօրվա մի քիչ դժվարին պայմաններում: Դժվարին այն իմաստով, որ պահանջքը շատ է, իսկ մենք չենք կարողանում բավարարել, պատասխանել այն հրավերներին, որ գալիս են մեզ: Ամեն կողմից հոգևորական են ուզում: Հենց օրինակ երեկ մի դիմում ստացա, ինձ համար անսպասելի, Գրիգորյոպոլսից, որ Մոլդավյո մեջ է, (հայերը այդ քաղաքը հիմնած են գիտե՞ք, չգիտեմ մի 150 տարի առաջ՝ Ցարական Ռուսաստանի շրջանին Բեսարաբիո մեջ). այնտեղ մնացել է հայ համայնք տակավին և հոգևորական են ուզում: Բայց տևապես այսպիսի պահանջքների առաջ ենք գտնվում: Մեկ կողմից ուրախանում ենք, որ մեր ժողովուրդը ամեն տեղ, ներքին Սփյուռքում նաև, դեմքը դարձրել է դեպի մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, բայց մյուս կողմից էլ տխրում ենք, որ չենք կարողանում բավարարել բոլորին: Բայց անշուշտ պիտի աշխատենք այդ վիճակին հասնել մոտ ապագայում:

Ահա, թե ինչու կրկնում եմ, վճռական նշանակություն ունի հոգևոր ճեմարանը մեր կյանքում այսօր, վաղը և տարիներ շարունակ տակավին: Մեկմեկ նկատում եմ, որ երբեմն ոմանք մի քիչ անտարբերությամբ են նայում մեր հոգևոր ճեմարանին, նույնիսկ մեր հոգևորականներից. դա անշուշտ ցավալի սխալ է: Մեր Եկեղեցին չի կարող ապրել և զարգանալ առանց հոգևոր ճեմարանի նոր սերունդների պատրաստության: Կենտրոնական տեղ է գրավում հոգևոր ճեմարանի գործն իմ կարծիքով մեր այսօրվա կյանքում մանավանդ: Եվ հաճելի է հոգևոր ճեմարանի հարկի տակ աշխատել: Ով որ մանկավարժ է, ով որ քիչ-շատ փորձառություն ունի ուսուցչական և հաճույք է գտնում դասավանդելու գործի մեջ, նա պետք է անդրադառնա, որ իսկապես մի կարևոր հաստատություն է այս, թող հպարտ լինեն մեր դասախոսներն էլ, որ լծված են այդ աշխատանքին, բնականաբար ես գնահատում եմ նրանց աշխատանքն ու գործունեությունը: Նույնիսկ, ես ուրիշ անգամ էլ ասել եմ, և սա ձևական խոսք մի նկատեք, եթե ես կաթողիկոս չլինեի, այստեղ պիտի ուզեի հոգևոր ճեմարանի տեսուչ լինել:

Սքանչելի գործ է նոր սերունդ պատրաստելը, հատկապես հոգևոր իմաստով, կրոնական իմաստով: Մանավանդ այս շրջանին, երբ հայ հոգևորականի առջև մեծ պարտականություններ են դրվում, և այն երիտասարդը, որ ընդունակ է մի իդեալի ծառայելու, թող նա Քրիստոսի խաչը վերցնի և մեզ հետ առաջ ընթանա:

Իմ գնահատանքի խոսքն ուզում եմ ուղղել հատկապես տեսչությանը՝ Ներսես արքեպիսկոպոսին, որ ժամանակավոր կերպով ստանձնեց պարտականությունը՝ վերահսկելու տեսչական գործին իրեն իբրև անմիջական օգնական ունենալով պրն. Բաղդիշյանին, նա էլ բարեխիղճ կերպով շարունակեց աշխատել:

Այս ձևով, ես գիտեմ, որ վերահաստատվեց կարգ ու կանոնը, կարգապահությունը և ուսումնական բնականոն կյանքը հոգևոր ճեմարանի հարկի տակ:

Նոր հեռանկարներ են բացվում մեր առջև, և հատկապես ես ոգևորված եմ, որ Գևորգյան ճեմարանի նախկին շենքը արդեն վերադարձված է մեզ, և վերանորոգություններ պիտի սկսենք: Դժբախտաբար շատ վատ վիճակում է շենքը, որովհետև հարյուր քանի տարիներ լուրջ վերանորոգության չի ենթարկված, ամբողջ ծածկը պետք է փոխել իր փայտյա մասերով, հատակները և այլն, դժվար թե մեկ տարվա ընթացքում հասնի, դժվար թե մենք հառաջիկա տարի կարողանանք փոխադրվել նոր շենքում: Սակայն վստահ եմ, որ մեր շինարարները պիտի իրենց ճիգերը մեկտեղեն, որպեսզի 1992 թվականի աշնան մեր ճեմարանի վերաբացումը տեղի ունենա պատմական Գևորգյան ճեմարանի շենքի մեջ:

Մաղթանքներ արեցին ինձ Ներսես սրբազանը, Արտակ սրբազանը, երկար կյանք մաղթելով, պետք է անկեղծորեն ասեմ, թե սպասում եմ, որ առնվազն մինչև այն ատեն ապրեմ:

Ահավասիկ իմ խոհերը, իմ թելադրանքները՝ ուղղված և՛ դասախոսական կազմին, և՛ մանավանդ մեր սիրելի ուսանողներին: Սիրով պիտի սպասենք վերաբացումը նոր տարեշրջանին՝ հառաջիկա սեպտեմբերին:

Թող Աստված օրհնի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, համայն մեր հավատացյալ հայ ժողովուրդը և Մայր Աթոռիս հոգևոր ճեմարանը. ամեն:

Հանդիսությունն ավարտվեց «Հայր մեր»-ի միասնական երգեցողությամբ և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով: